ՎԱՉԵ ԵՓՐԵՄՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԻՐ ԵՎ ՏԱՐԲԵՐԱԿ

Վարդան Գրիգորյանի «Մանյա այրքում» (1988 թ.) նշանավորված մշակութաբանական սանդղակարգի յուրաքանչյուր վերծանվող-մեկնաբանվող ըմբռնում, դրոշմվելով իրեն վերապահված աստիճանին, բացահայտում է երկդարս էությունը. իր մեջ ավարտվում է նախորդ իրողությունը, իր մեջ է նաև հաջորդողի սկզբնապահը: Այս առանձնահատուկ «ասեղնագործության» ընթացքը պայմանավորված է վիպական պատումի կառուցվածքով, որի էատարրը պտույտն է. ներքին մենախոսությունների հոսքերը սկիզբ են առնում Մանյա այրքից, ավարտվում Մանյա այրքում:

Մշակութաբանական սանդղակարգի առանցքը Ժամանակի ըմբռնումն է: Ժամանակի անընդհատական հոսքն այս դեպքում ևս կարգավորված է շրջանի էապատկերում, հեղինակային Դիտակետից ընկալվող-գիտակցվող կարգը պարզորոշվում է ճախարակի պտույտի, կրկնվող պատմության շնորհիվ. Ժամանակը «անսկիզբ ու անվերջ փակ շրջան է ինքն իր մեջ» (333), ճշմարիտ աշխարհակերպը, իմաստավոր աշխարհըմբռնումը հասանելի են միայն նրան, «ով մեկ ժամանակի մեջ կտարրալուծի անցյալն ու ներկան» (334): Ժամանակի այս կերպ ըմբռնումը Հարաբերական Ներկայի ու վիպական աշխարհի կառուցման հիմնական շինանյութն է. վիրավոր Գրիգորը Աշտիշատը հեթանոսազերծ անելուց հետո «քնում էր պառավի չարքահալած անեծքի ներքո, արթնանում լուսադեմին վերադարձած քահանաների աղոթքից (192-193)»: Տրդատը կյանքի վերջում փախչում է «Մանյա այրք», մանուկ հասակում էլ դայակներն էին փախցրել ապստամբ նախարարներից. Տրդատի և հոր՝ Խոսրով արքայի վախճանները պատված են միևնույն առեղծված-քողով. նոր հավատքի ազդարարներ Տրդատի և Գրիգորի զոջում-մահվան միակ վկան երդվյալ հնադավան Վրույրն է. քրմերի գերդաստաններից ընտրված մանուկները եպիսկոպոսական տոհմերի սկզբնավորողներն էին լինելու, ավելին՝ քրմապետ Վրույրի որդի Աղբիանոսն էր ամենանվիրված քրիստոսապաշտը: Հակադարձ համընկնումները կրկնվելով կենսափաստ-պատահականություններից վերածվում են անհատական ճակատագրի, վերաճում կրկնվող պատմության տրամաբանության, գիտակցվում իբրև պատմության հոսքի ներուժ-գաղափար:

Իմաստասիրական միամտություն է Ժամանակը մասնատելը, ավելին՝ տարբեր հատվածների միջև կապ որոնելը, քանի որ «անցյալը չգոյություն» է, և միասնական, անընդհատական Ժամանակի սահմաններում է որոնվում եղելությունը: «Ժամանակի ու գոյության զարկերակ եղելությունը» որոնվում-չի գտնվում, որովհետև աշխարհում «մեկ չէ անգամ ճշմարտությունը» (334): Ժամանակի ըմբռնման ներսում նախապատրաստվում է պատմության անստույգ հայտնակերպը. «Մեր ու ցավ չկա ձեր գրվածքներում, ոչ թե զգացածն ու ապրածը, այլ լսածն եք գրում: Թշնամին սատկի, թե մեր արքաները զոհվեն, ձեզ համար միևնույն է, նույն բառերով եք եղածն արձա-

նագրում… Մատյանները հակասում են մեկմեկու…» (69-70): Տրդատ արքայի՝ քրմերին ուղղված նախատինքի մեջ փաստորեն ընդգծվում է իրական, ճշմարիտ պատմության թվացյալ ներկայությունը («Մատյանները հակասում են մեկմեկու»): Միակ ու անվերապահ Պատմությունը, ըստ էության, անհայտ ընթացք է, Պատմության Բնագիրը երբեք չի ընթերցվում: Ծանոթ, հայտնի պատմությունները ներքին մենախոսություններ են (այս դեպքում՝ քրմապետ Վրույրի, հայրապետ Գրիգորի, արքա Տրդատի, հեղինակի), տարբերակներ, որոնք անհատական ընկալումների, գնահատականների, կռահումների, ենթադրությունների, վերծանում-մեկնությունների տարափով գալիս խփվում են Բնագրի պարիսպներին, սակայն դարպասը չի բացվել-չի բացվում, քանի որ «ականատեսներից ոչ ոք գրիչ չէր վերցնելու, չէր նկարագրելու տեսածը, թեթևացնելով Գրիգորի ապագա վարքագիրների գործը, որ տարիներ հետո հրաշապատում երկասիրություններով հավերժական մուժի մեջ էին թաղելու եղելությունը: Ականատեսները անխոս ուխտով լռելու էին…» (37): Այսպես է պատմական «անցյալը չգոյության» վերածվում, և «ականատեսների գրիչ չվերցնելու» պարագային Պատմության Բնագիրը, իրական եղելությունը վերափոխվում են ներքին մենախոսությունների շարքում տևող տարբերակի, գիտակցվում իբրև Ինքնամփոփ Քաղաքակրթության տարատեսակ կամ գաղտնագրված ընդարձակ-ընդհանրական Ագռավաքար. Պատմությունը հայտնվում է լուսանցքում՝ «Պատմություն պատմությունից դուրս» արտասովոր կարգավիճակով:

«Մանյա այրքի» հեղինակը Պատմության իր տարբերակը ստեղծելու ներքին ազատությունը, Պատմության Մեծ Լռության դրվագները («Մահն ու խուլ այրերում անցկացրած յոթ տարիները գաղտնիք էին մնալու, ոչ ոք այդպես էլ չէր իմանալու, թե ի՞նչ էր խորհել… մտաբերել, աղոթել թե՞ նզովել» (49) վերաարարելու իրավունքը հիմնավորում է քրմապետ Վրույրի հայեցակարգով՝ «հազարամյակների պատմությունը վերապրվում է յուրաքանչյուրի մեջ» (272). նշանակում է՝ չկա անցյալ ու ապառնի, անընդհատ հոսում է պատմության Հարաբերական Ներկան, որի տևողությունը մինչև հերթական այս պահն է, Տրդատն ու Գրիգորը, հեղինակն ու ընթերցողը նույն ժամանակի մեջ են, վերապրում են միևնույն պատմությունը, մի է «անցնելիք ճանապարհը՝ անցյալից ներկա, ներկայից՝ անցյալ»:

Պատմության Բնագիրը իրապես Մեկ Հոգու ներաշխարհում տևող գաղտնիք է, և եղելության՝ յոթ կողպեքով փակված լինելն է հնարավոր դարձնում արտաշխարհի համար տարբերակների հորինումը, իսկ հորինվածի մեջ ջնջվում են առասպելի ու Պատմության, հրաշապատում տարբերակի ու եղելության սահմանները՝ Պատմությունը թաքնվում է առասպելի սնդուկում, առասպելը հագնում է Պատմության ծիրանին: Քրմապետ Վրույրը՝ «միակ ականատեսն ու առասպելի սրբազան փոշով չկուրացածը, չի սպանելու հյուսվելիք առասպելը», բայց սպասելու է իրեն Վերապրողին, որը «գուցեև ավելորդ չհամարի թափանցել առասպելի խորքը, փորձի քանդել առեղծվածը… անսպասելիորեն հանկարծ եղելությունն ավելի առասպելական կներկայանա, քան հյուսվածը, մոռացության տրվածը՝ ավելի արժանահիշատակ, քան վերագրվածը» (333): Բայց քանի որ «մեկ չէ անգամ ճշմարտությունը», և Ժամանակի մեջ որոնվող եղելությունը երբեք չի գտնվում, ուրեմն՝ վերապրվում է Պատմության տարբերակը, իսկ Մեկ Հոգու ներաշխարհում տևող Պատմության Բնագիր-գաղտնի-

քը վերապրելու դեպքում միակ ականատես-իմացողը լռելու ուխտ է անում, գրիչ չի վերցնում, «չի սպանում առասպելը», և վերապրումի մեջ ևս Պատմության Բնագիրը ընթերցվում է իբրև չվերծանված Մեծ Լռություն:

Վ. Գրիգորյանը կերպավորում է արտաշխարհի համար պատմություն հորինողին, հորինվելիքի պատվիրատուին, տեսանելի դարձնում Բնագիրը տարբերակով փոխարինելու ընթացքը. Տրդատ արքան նախարար Սղուկին պարտադրում է քաղաք մտնել, սուգ ու շիվանով մարդկանց ներկայացնել, «թե իբր Հայոց արքա Տրդատը, խելքից ու մարդկային տեսքից ընկած… պատեպատ է խփվում…, թե իբր իրականացել է պառավ մայրապետի անեծքը, խոզակերպ վայրի գազան է դարձել… Գնա, Սղուկ, գնա ու պատմիր» (103): Պատմության այս մի տարբերակը ստեղծված է, անգամ կանխատեսվում է պատմական արձագանքը:

Պատմության նմանակերպ ըմբռնման դեպքում, բնականաբար, իրադարձությունների պարզ տեղաբաշխումը պատմական քարտեզի վրա երկրորդական նշանակություն է ունենում, միայն հաղթություն սփռող թրի փայլատակումները սևագրում արված ջնջումների տպավորություն կարող են թողնել: Մշակութաբանական համատեքստում և գեղարվեստա-իմաստասիրական հայեցակարգում սպառազեն ու հանդիսավոր պատմությունը առանցքային դերակատարում չի կարող ունենալ: Հեղինակի խնդիրը եղելության, արարքի, մտածողության, գաղափարի Նախն ու Հետոն, կանխատեսումն ու արձագանքը երևակելն է: «Մանյա այրքում» ներգննվում, իմաստավորվում են հայոց դժբախտությունների, բարոյական անկումների, նաև Հայոց Տեսակի լինելության առեղծվածի հիմքերը:

«Նրանց (Տրդատի ու Գրիգորի -Վ. Ե.) հանդիպումը շամբուտի գաղտնիքն էր մնալու, ոչ ոք չէր իմանալու՝ ինչպես էին դիմավորելու մեկմեկու, ինչ էին խոսելու առանձնության մեջ, ինչ դաշն էին կնքելու (120): Լռությունը ընդհանրապես մշակութաբանական, մասնավորաբար Հայոց Մշակութակերպի առանցքային նշաններից է: Այս դեպքում Լռությունը, բացի Պատմության Բնագրի մեկ դրվագ լինելուց, նաև Նախի ու Հետոյի սահմանագիծն է, միջանկյալ տարածությունը, որում ավարտվում-ամբողջանում է հին աշխարհը և մտահղացվում-նախանշվում նորը:

Չվերծանված Լռությունից սկիզբ է առնում սահմանամերձ իրավիճակի, սրա վերջածանց հոգեբանական վարանումի տևողությունը: Նախապես անհատական հոգեվիճակը վերափոխվում է համատարած նկարագրի, հավաքական վարքի, աշխարհըմբռնման ելակետի. Տրդատը «հալածեց և նոր միայն հաստատեց, ու ոչ ոք այլևս մեջը ուժ չգտավ հակառակվելու կամքին» (79): Արքային հետաքրքրում է երկրի հզորությունը, ուրեմն՝ արդարացված է նրա պատմավարքը՝ «հալածեցի, երբ ցանկացա, և հաստատեցի, երբ պետք էր» (72). քրմապետ Վրույրը չի անցնում նորի սահմանագիծը, ուրիշ հնադավանների պես չի փոխում շապիկը, այս պատճառով էլ միակ անկողմնակալ ականատեսն է՝ անկողմնակալ, քանի որ գիտակցում է հնի անդառնալիությունը. Գրիգորը ներքին ազատություն ուներ, երբ քրիստոնեությունը դեռևս գաղափար էր՝ անդորր ներհայեցողությամբ հատկանշվող, կորցնում է, երբ գաղափարը վերաձևում են անհրաժեշտության, քաղաքականության, պարտադիր հավաքական կեցվածքի. «…Թե ողջ մնաց, կգնա Վաղարշապատ, կկանգնի արքայի դեմ… և կասի՝ «Ետ առ հայրապետական վեղարը, որ վերգտնեմ ազատությունս»…» (32): Նախա-

բարները պարտադիր կեցվածքն ընդունում են առերես անխուճապ, քանի որ «արքայի ընտրությամբ ազատված էին ընտրությունից» (170): Հոգևոր կերպափոխումների ձևերը, շարժառիթներն ու առաջնորդ նպատակները տարբեր են, ընդհանուր են կորստի, զղջման զգացողությունն ու ողբերգականության դրոշմը: Քրմապետ Վրույրը մեկնում է նաև այս դրությունը. Տրդատն ու Գրիգորը հայոց վերջին մեծերն էին, ճիշտ է, կանխազգացին հնի կործանումը և նորի ժամանումը, բայց ոչ թե «սկիզբ, այլ անցածի վերջը» եղան:

Չվերծանված Լռության, ողբերգական երկվության, անհատական ու հավաքական պառակտման հիմքով Պատմության Ներկան գիտակցվում է իբրև տնական, գուցե անվերջանալի սահմանամերձ կամ պատմահոգեբանական վարանումի ներվիճակ: Այս տնականությունը Նախի և Հետոյի ներգննումը ընդարձակ տարածություն է տեղափոխում՝ միաժամանակ հնարավոր դարձնելով մշակութաբանական հրավեր-այցերի հաճախանքը: «Մանյա այրք» Պատմության տարբերակին հյուսված մշակութաբանական հոսքերը հատկանշվում են հստակ խնդրառությամբ: Հայկ Նահապետի հպանցիկ հիշատակումը գնահատման նշանակություն ունի. «Խորտակված մեհյաններից հալածված նահապետի ռազմաշունչ ոգին… լայնալիճ աղեղը ուսին… դեգերելու էր այդ հնագույն հողում, այդպես էլ չհասկանալով… թե ինչո՞ւ կործանեցին իր հիմնադրած սյուները և խաչվածի չարչարանքը երկրպագեցին, եթե նախկինի նման ուժն ու վայելքն էին կառավարելու աշխարհը» (10): Առասպելի գրված տարածքն ընդամենն այսքան է, սակայն խորտակված մեհյանների խորհուրդն ու Հայկ Նահապետի ոգին, նաև անպատասխան հարցադրումը տեսելու են քրմապետ Վրույրի ներքին ժամանակում:

Խորենացու «Ողբն» արդեն տարրալուծված է պատումին՝ նպաստելով Չվերծանված Լռության ածանցյալ անկարգ պատմավարքի վերհանմանը: Պատմահոր անունը, բնականաբար, չի հիշատակվում (այլ դարաշրջան է), սակայն ձևավորվող Պատմության տարբերակի դիմապատկերով կանխատեսվում է «Ողբի» անխուսափելի ծնունդը:

«Ողբի» հայտնակերպերի նշանաիմաստային շարքերը կանխագրվում են իբրև մեր Մշակութակերպի ուղեկից հավերժական Անեծքի անդրադարձներ, ի դեպ, պարտադիր չէ, որ անեծքն ընդունի աղմկալի, պոռթկուն խոսքի տեսք: Անեծքը գրեթե միշտ բովանդակավորվում է զուշակության-կանխատեսման մղումներով ու թաքուն-բացահայտ խնդրառությամբ, այս պատճառով էլ հաճախ հատկանշվում է խոսքային հանդարտ տոնայնությամբ, դեպքերի հաջորդող ընթացքը նախապես իմացողին բնորոշ համակերպումով.

1. ա) Անեծք. «Ստրուկները իրենց տեր կերևակայեն, բայց երբեք տեր չեն դառնա, տեր դառնալու մոլուցքով կկործանեն այն ամենը, ինչն իրենցը չէ, քանի որ ավերակների վրա առավել դյուրին է հաստատել սեփական գոյության իրավունքը: Բայց Հին Հայաստանի ավերակների վրա բարձրացած խաչը երջանկություն չի բերի նրանց» (139, Վրույր): բ)«Ողբի» նախընթերցում. «Նախկին կարգազանցները կրծքներին խաչ են կախում, իրենց նոր հավատի «տարածող» հայտարարում և կողոպտում տնավորներին: Երկիրը լցվել է ինքնակոչ մարգարեներով ու քարոզիչներով» (22):

2. ա) «…Ծիծաղն ու վայելքը վերանալու են ձեր երկրից: Առաջինը ոտք դրիք ար-

դարության ու ճշմարտության ճանապարհը, կռապաշտ ու կույր մնացիք… Պատռվելու և անկարկատան է մնալու ձեր երկիրը, գերության լուծ է դրվելու ձեր պարանոցին… Զրկելու է ձեզ ամեն ինչից ու միայն խաչի հավատը թողնելու, արյամբ ու ողբով եք վարձահատույց լինելու… Արդեն հայտնի է ձեր թագավորության կործանման տարին ու օրը…» (308, Սուրբ Եփրեմ): բ) «Ինքնասպան ազգ են դարձել, ոչ թե վերջին կռիվն է, այլ սկիզբը անվերջ զզվոտոցի, սեփական ձեռքով նետահարել են ցեղի սիրտը և վաղը որբ են մնալու» (38-39), «Այդ գիշեր նույնացան քահանա ու ավազակ» (42), «Խնջույք սարքեցին և ամենավատթար հեթանոսների նման հարբեցին յոթ օր ու գիշեր… Հեթանոսության դարձի օրեր էին…» (162-163), «Խաչի ու փրկության հավատի անունից անօրենների ավելի դյուրին եղավ անօրենություն սփռել» (208):

3. ա) «Գո՞ւցե անժառանգ պետք է մնար, գո՞ւցե ինքը պետք է լիներ արքայատոհմի վերջը, գո՞ւցե Արշակունիները չպետք է հատեին նոր ժամանակների սահմանը…» (289):

Անեծքի շարքի առաջին հատվածում ակնհայտ է Արտավազդի սյուժեի իմաստային զուգահեռը՝ «Ես աւերակացս ո՞ւմ թագաւորեմ»-ի ենթատեքստային հակադարձումով: Արտավազդը բացառեց «աւերակացս» տեր կանգնելու հնարավորությունը, հաջորդողների համար ավերակները ինքնահաստատման բացառիկ պատեհություն են. «ավերակաների վրա առավել դյուրին է հաստատել սեփական գոյության իրավունքը» բանաձևով ավերվում-սպառվում է Առասպելը՝ սկիզբ դնելով պատմության անկմանը: Արտավազդի հրաժարումը ճախարակի պտույտի սկիզբն է, Խորենացու «Ողբը»՝ հարաբերական ավարտը: Ի դեպ, «Ողբի» տեքստային ուղղակի զուգահեռները չեն մեջբերվում, քանի որ խնդիրը տեքստաբանական նպատակներ չի հետապնդում, իմաստավորը հեղինակին ու ընթերցողին ծանոթ տեքստի «ժամանակավոր անէացման» ու պատմատարածական տեղաշարժի գեղարվեստական սկզբունքն է. «Ողբը» դեռևս չի ստեղծված, բայց կանխատեսվում է նրա տեքստի նշանաիմաստային կարգը, խոսքի կառուցման շնչառությունն ու քերականությունը, հայտնակերպն ու խնդրառությունը: Քանի որ «Ողբը» դեռևս չկա, և հայտնի չէ հեղինակը, Վ. Գրիգորյանը իրեն է վերապահում պայմանական բանահավաքի դերը, որը հավաքագրում է պայմանական հեղինակների (Վրույր, Տրդատ, Եփրեմ) տարբերակները:

Պատմության անկումը Պատմության Բնագրի՝ իրենց վերապահված պարբերությունը հեղինակել փորձողներին՝ Տրդատին և Գրիգորին, մղում է հեռացման: Տրդատի ու Գրիգորի ջանքը, փաստորեն, կերպափոխվում է տարբերակի ստեղծման իներցիայի, և նրանք ապաստանում են Պատմության Լուռ Բնագրի ներսում. «Երկուսն էլ հասկացան, որ իրենց ստեղծածը լոկ իրենցն էր, ձևված իրենց չափսերով, ծվատվելու և այլասերվելու էր ժառանգների ձեռքին, նման թզուկների ձեռքն ընկած հսկայի պատմուճանին, որ կտրատելու, վերաձևելու էին ըստ իրենց գաճաճ մարմնի» (153): Պատմության Բնագիրը («Ես Բարդուղիմեոսի փայտյա խաչին էի հավատում և ոչ թե սրան») պետք է ամփոփվի Լռության մեջ, և Գրիգորը, Տրդատը, քրմապետ Վրույրը հաջորդաբար հեռանում են Մանյա այրք:

Պատմության Բնագիրն ու իսկական Առասպելը Մշակութակերպի նշաններ են, և առաջինի վերծանումն ու երկրորդի վերածնունդը հնարավոր են միայն որպես մշակութաբանական Ճակատագիր: Բանալին, բնականաբար, Գրիգորի ձեռքին է. նրան

«թվաց՝ աստվածային խորհուրդ կար ընտրության մեջ, փրկության հավատը անզրահ կուրծք էր թափանցել, արմատ գցել այն երկրում, որը չէր փրկվելու, բայց իր կործանմամբ անեղծ էր պահելու փրկության հույսը, սեփական տառապանքով ապաշխարելու համաշխարհային մեղքը» (137):

Գրիգորը փակվում է Մանյա այրքում. Արարքի և Պատմության Բնագրի մեջ կանխատեսվում է Ագռավաքար-Փոքր Միհրի հայտնությունը: Մանյա այրքը (նաև Խոր Վիրապը) Ագռավաքարի տարբերակ-նախանշանն է՝ խորհուրդով, առաքելությամբ, նախընթաց իրաշարով. 1. «… Բայց հիմա էլ գետինն է ճահիճ դարձել ոտքերի տակ, ոտքերը հողի մեջ են գնում: Փորձում է փոխել ոտնատեղերը, բայց ավելի խորն են թաղվում… Ամեն ինչ անհաստատ ու լպրծուն է իրերի ունայն աշխարհում…» (37): Ավելորդության զգացումը միայն թունավոր նետով վիրավորվելու հետևանք չէ, միշտ ուղեկցում է Գրիգորին: 2. «Թե բոլորի հոգում էլ Մանյա այրքի կարոտը կար…» (213): 3. «Մի՞թե Մանյա այրքը վերջին կայանն է հոգնած ճամփորդների» (214): 4. «Ո՞վ է գտնելու մենության լեռան գաղտնիքը» (269). հողի մեջ խրվելը դյուրընկալ զուգահեռ է, Մեկ Հոգու (Մեկ Հոգիների) ներաշխարհը ինքնատիպ Ագռավաքար է, ճամփորդանցորդ-հեռացողը և Մենությունը Հայոց Մշակութակերպի էանշաններն են, որոնք ամբողջանում են Փոքր Միհրի մեջ: Մշակութաբանական համատեքստում և Հայոց Մշակութակերպի ժամանակային չափումի մեջ կռահելի է Գրիգոր Լուսավորիչ = Գրիգոր Նարեկացի = Փոքր Միհր արժեշարքը՝ արարք-անհատակերպ-ճակատագիր վերպատմական ընթացքի իմաստավորումով…

«Մանյա այրքում» մի դրվագ կա, որը կարելի է ընկալել իբրև մշակութաբանական ուտոպիա. Գրիգորը վաթսունվեց օր մնում է Ագռավաքարի մասնավոր փոխակերպի՝ հնձանի ներսում և դուրս գալով՝ ներկայացնում Աշխարհի (ոչ թե երկրի) նորոգման ուղին. «Ոչ միայն դուք, ողջ մարդկային ցեղն է բռնված անբուժելի ախտով: Հոգու և մարմնի աններդաշնակություն, ահա մարդկությանը բռնած համաճարակի անունը…մարմինն է լոկ ձերը, սեփականը, միսն ու արյունը, որ զօր ու գիշեր նվում է հուսահատությունից, խարխափում մեղքի ու պղծության խավարում, ճչում և անարձագանք մնում ունայնության ծովում: Փրկեք, սուրբ խոսքով ու քավությամբ մաքրեք ձեր մարմինները և վերգտեք կորսված ներդաշնակությունը և կատարյալ երանության համը կճաշակեք արդեն այս կյանքում» (129 -130). սա, ըստ էության, «որ աշխարհք ավերվի, մեկ էլ շինվի» նշանառության նախակերպն է, Մենության լեռան գաղտնիքի լուծումը նաև սրանով է պայմանավորված…

«Արդեն մտովի բաժանում, ծվեն-ծվեն են անում Արշակունյաց թագակիր պատմուճանը, որը մեծ է լինելու մինուճարի ուսերին… Չէ, այլևս տեղ չունի այս կյանքում, կորցրել է կապն այս աշխարհի հետ, իր տեղն այնտեղ է, այդ անիծյալ այրերում: Միևնույն է, ոչ ոք չի հասկանալու իր կերպարանափոխության իմաստը» (302): Տրդատը ևս հասնելով Մանյա այրք՝ քայլ է անում դեպի «Ագռավաքար-Փոքր Միհր» ներվիճակը: «Չէ, այլևս տեղ չունի այս կյանքում»-ը համարժեքն է «մեջ աշխրքին ես չեմ մնա» Փոքր Միհրի մտադրության, իսկ «պատմուճանը մեծ է լինելու մինուճարի ուսերին»-ը կարելի է ընթերցել իբրև փոխաբերության մեկնություն. ցորենի մասուր, գարու ընկույզ դառնալու ժամանակներում ամեն մեկն համապատասխանելու է իր հագուստին, իր Անվանը, թագաժառանգի պատմուճանը այլևս մեծ չի լինելու:

Մանյա այրքը Մեկ Հոգու Քաղաքակրթության վայրն է: Մեկ Հոգին Ճամփորդն է, Միայնակը, Ճգնահակը, պատմության վտարանդին: Նա Մշակութակերպի կրողն է, և իր ներաշխարհում ձևավորված Ինքնամփոփ Քաղաքակրթության գաղափար-ներվիճակը տեսանելի, ընդհանրական աշխարհ դարձնելու փորձերը ապարդյուն են, քանի որ արտաշխարհն ու պատմությունը այլ չափանիշ-արժեքներով են առաջնորդվում:

Այսպիսով, Մշակութակերպի լավագույն դրսևորումը Մեկ Հոգու (Մեկ Հոգիների) աշխարհում է հնարավոր, և պատահական չէ, որ հեղինակը Գրիգորի մեջ է կերպավորում Հայոց Տեսակի Փոխանունությունը. «հովիվները նրան [Մանիին] գտնելու էին նույն դիրքում՝ գլուխը դեպի արևմուտք, ձեռքերը տարածած հյուսիս և հարավ, նման աշխարհի չորս կողմերը խորհրդանշող հնագույն խաչին» (3):

Ինքնամփոփ Քաղաքակրթությունը հավասարապես վերպատմական և ներպատմական իրողություն է: Հայոց մեծ դարձը պատմությունից վեր ելնելու և միաժամանակ պատմության մեջ սեփական-ինքնատիպ խեցու ներսում պարփակվելու իմաստավոր, ինքնապահպան Արարք էր: Տրդատը Գրիգորին Խոր Վիրապից հանելուց հետո հանձնարարում է՝ «հավատի բեր, միավորիր ազգս, սահման դիր նրա և օտարների միջև»(133): Քրիստոնեության սկզբնակերպը հայերին բովանդակեց յուրօրինակ Ինքնամփոփ Քաղաքակրթության ներսում, իրոք սահման դրեց մեր ու աշխարհի միջև: Հայոց Արարքը համաշխարհային ճգնակեցությամբ է նշանավորվում: Գրիգորի՝ Ինքնամփոփի դուռը բացողի Արարքի մեջ առկայծում է Հայոց Ճակատագրի Նշանը…